Հայկական պետականությունների ղեկավարների ցանկ

Վիքիմեդիայի նախագծի ցանկ

Ուշադրություն, այս հոդվածը կամ հոդվածի բաժինը փաստերի և տեղեկությունների ճշտման կարիք ունի:

Learn more

Վանի թագավորություն

Վանի թագավորության արքաների կառավարման տարեթվերը ներկայացված են մոտավորապես, քանի որ նրանց մասին տեղեկատվություն շատ քիչ կա և որոշ թվականներ կարող են վիճարկելի լինեն:Փակագծերում նշված են տարեթվերը ըստ «Հայոց պատմություն, դասախոսությունների ձեռնարկ», Երևան 1998, Աշոտ Մելքոնյան:

Վանի թագավորներ

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Արամե	մ.թ.ա.858 - մ.թ.ա. 844 *(մ.թ.ա.859 - մ.թ.ա.843)*			
Լուտիպրի	մ.թ.ա. 844 - մ.թ.ա. 834			
Սարդուրի Ա	մ.թ.ա. 835 - մ.թ.ա. 825 *(մ.թ.ա.835 - մ.թ.ա.825)*			
Իշպուինի	մ.թ.ա. 825 - մ.թ.ա. 810 *(մ.թ.ա.825 - մ.թ.ա.810)*			
Մենուա	մ.թ.ա. 810 - մ.թ.ա. 786 *(մ.թ.ա.810 - մ.թ.ա.786)*			
Արգիշտի Ա	մ.թ.ա. 786 - մ.թ.ա. 764 *(մ.թ.ա.786 - մ.թ.ա.764)*			
Սարդուրի Բ	մ.թ.ա. 764 - մ.թ.ա. 735 *(մ.թ.ա.764 - մ.թ.ա.735)*			
Ռուսա Ա	մ.թ.ա. 735 - մ.թ.ա. 710—ական *(մ.թ.ա.735 - մ.թ.ա.710—ական)*			
Արգիշտի Բ	մ.թ.ա. 710—ական - մ.թ.ա. 685 *(մ.թ.ա.710—ական - մ.թ.ա.685)*			
Ռուսա Բ	մ.թ.ա.685 - մ.թ.ա. 645 *(մ.թ.ա.685 - մ.թ.ա.645)*			
Սարդուրի Գ	մ.թ.ա. 643 - մ.թ.ա.625			
Սարդուրի Դ	մ.թ.ա. 625 - մ.թ.ա.620			
Էրիմենա	մ.թ.ա. 620 - մթ.ա.605			
Ռուսա Գ	մ.թ.ա. 605 - մ.թ.ա.595 *(մ.թ.ա.605 - մ.թ.ա.585)?*			
Ռուսա Դ	մ.թ.ա.595 - մ.թ.ա.585			

Պարույր Սկայորդի

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Պարույր Սկայորդի	մ.թ.ա.612 - մ.թ.ա. ?	մ.թ.ա 612 թ.-ին Մարաստանի Կիաքսար թագավորը ճանաչել է Հայոց արքա և ըստ որոշ մասնագետների արդեն մ.թ.ա. 612 - մ.թ.ա. 609 թթ.-ներին Ուրարտուի թագավորությունում իշխանությունը անցել էր Պարույրին, այսինքն դինաստիաների փոփոխություն էր իրականացվել[1]:		
Հրաչյա	մ.թ.ա. ? - մ.թ.ա. ? (ըստ Մովսես Խորենացու Նաբուգոդոնոսոր I-ի ժամանակակիցն է եղել)	Պարույր Սկայորդու որդի		

Երվանդունիներ

Երվանդունիների կառավարման տարեթվերը ներկայացված են մոտավորապես և որոշ թվականներ կարող են վիճարկելի լինեն:

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Երվանդ Ա	մ.թ.ա. 570 - մ.թ.ա. 560		Երվանդունիներ	
Տիգրան Երվանդյան	մ.թ.ա. 560 - մ.թ.ա. 535		Երվանդունիներ	
Վահագն Երվանդյան	մ.թ.ա. 535 - մ.թ.ա. 515		Երվանդունիներ	
Հիդարնես Ա	մ.թ.ա 6-րդ դար		Երվանդունիներ	
Հիդարնես Բ	մ.թ.ա.5-րդ դարի առաջին կես		Երվանդունիներ	
Հիդարնես Գ	մ.թ.ա. 5-րդ դարի կեսեր		Երվանդունիներ	
Արտաշիր	մ.թ.ա. 5-րդ դարի երկրորդ կես		Երվանդունիներ	
Երվանդ Բ	մ.թ.ա. 401 - մ.թ.ա.344	սատրապ	Երվանդունիներ	
Դարեհ III	մ.թ.ա. 344 - մ.թ.ա. 336	սատրապ		
Երվանդ Գ	մ.թ.ա.336 - մ.թ.ա. 331		Երվանդունիներ	
Միհրան	մ.թ.ա. 331 - մ.թ.ա.323	սատրապ	Երվանդունիներ	
Պերդիկկա	մ.թ.ա. 323	օտարերկրացի		
Նեոպտելեմուս	մ.թ.ա.323 - մ.թ.ա. 321	օտարերկրացի		
Էվմեն	մ.թ.ա.321	օտարերկրացի		
Միհրան	մ.թ.ա.321 - մ.թ.ա. 317		Երվանդունիներ	
Երվանդ Գ	մ.թ.ա.317 - մ.թ.ա. 260		Երվանդունիներ	
Երվանդ Դ	մ.թ.ա. 213 - մ.թ.ա 195		Երվանդունիներ	

Փոքր Հայքի թագավորություն

Կոմմագենեի և Ծոփքի թագավորություն

Երվանդունիների կառավարման տարեթվերը ներկայացված են մոտավորապես և որոշ թվականներ կարող են վիճարկելի լինեն:

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Շամուշ (Սամոս)	մ.թ.ա.260 - մ.թ.ա. 240	Երվանդ Գ-ի որդի, հիմնադրել է Սամոսատ քաղաքը	Երվանդունիներ	
Արշամ Ա	մ.թ.ա. 240 - մ.թ.ա. 220	Սամոսի որդին, կառուցել է Արշամաշատ մայրաքաղաքը	Երվանդունիներ	

Ծոփքի թագավորություն

Փաստերը վիճարկելի են.

Թագավոր	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Շավարշ-Քսերքես (Քսերքսես Երվանդունի)	մ.թ.ա. 220 - մ.թ.ա. 201	Արշամի որդին	Երվանդունիներ	
Աբդիսարես	? - ?	Քսերքսեսի որդին		
Զարեհ	մ.թ.ա. 189 - ?	Շահունի արքայտոհմի հիմնադիր, մ.թ.ա.200 - մ.թ.ա.189 թթ.-ին եղել է Ծոփքի կառավարիչ. Սելևկյանների տիրապետություն		
Մորֆիլիգ	? - ?	Զարեհի որդին		
Արտանես	? - ?			
? - ?	? - ?			

Կոմմագենեի թագավորություն

Տարեթվերի համար հիմք է ծառայել անգլերեն Վիքիպեդիայի հետևյալ ցանկը.en:List of rulers of Commagene.

Թագավոր	Կառավարման տարիներ	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Պտղոմեոս Կոմմագենացի	մ.թ.ա. 163 - 130	Երվանդ Դ-ի որդին, Արշամի թոռը, մ.թ.ա. 200 - 163 թթ-ին եղել է Կոմմագենեի սատրապ		
Սամոս Բ Կոմմագենացի	մ.թ.ա. 130 - 109	Պտղոմեոսի որդին		
Միհրդատ Ա Կալլինիկուս	մ.թ.ա. 96 - 70	Սամոս Բ-ի որդին		
Անտիոքոս Ա Կոմմագենացի	մ.թ.ա. 70 - 38	Միհրդատ Ա-ի որդին		
Միհրդատ Բ Կոմմագենացի	մ.թ.ա. 38 - 20	Անտիոքոս Ա-ի որդին		
Անտիոքոս Բ Կոմմագենացի	մ.թ.ա. 20 - 20	Անտիոքոս Ա-ի որդին		
Միհրդատ Գ Կոմմագենացի	մ.թ.ա. 20 - 12	Միհրդատ Բ-ի որդին		
Անտիոքոս Գ Կոմմագենացի	մ.թ.ա. 12 - 17	Միհրդատ Գ-ի որդին		
հռոմեական պրովինցիա	17 - 38			
Անտիոքոս Դ Կոմմագենացի	38 - 72	Անտիոքոս Գ-ի որդին, կառավարել է քրոջ (համատեղության կարգով կնոջ)՝ Յուլիա լոտափայի հետ (Julia Iotapa) իշխանությունը Անտիոքոս Գ-ի երեխաներին վերադարձրել է Կալիգուլա կայսերը		

Արտաշեսյաններ

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Արտաշես Ա	մ.թ.ա. 189 - մ.թ.ա. 160	մ.թ.ա.200 - մ.թ.ա.189 Մեծ Հայքի կառավարիչ, Սելևկյանների տիրապետություն	Արտաշեսյաններ	
Արտավազդ Ա	մ.թ.ա. 160 - մ.թ.ա. 115		Արտաշեսյաններ	
Տիգրան Ա	մ.թ.ա. 115 - մ.թ.ա. 95		Արտաշեսյաններ	
Տիգրան Բ	մ.թ.ա. 95 - մ.թ.ա. 55		Արտաշեսյաններ	 Տիգրան Բ Մեծ
Արտավազդ Բ	մ.թ.ա. 55 - մ.թ.ա. 34		Արտաշեսյաններ	 Արտավազդ Բ
Արտաշես Բ	մ.թ.ա 34 - մ.թ.ա. 20		Արտաշեսյաններ	 Արտաշես Բ
Տիգրան Գ	մ.թ.ա. 20 - մ.թ.ա. 8		Արտաշեսյաններ	Տիգրան Գ
Տիգրան Դ և Էրատո	մ.թ.ա. 8 - մ.թ.ա. 5		Արտաշեսյաններ	Տիգրան Դ
Արտավազդ Գ	մ.թ.ա. 5 - մ.թ.ա. 2		Արտաշեսյաններ	
Տիգրան Դ և Էրատո	մ.թ.ա. 2 - մ.թ.1		Արտաշեսյաններ	Էրատո թագուհի

1 - 52 (66) թվականներ

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
թափուր	1-2			
Արիոբարզան	2 - 4	Ատրպատականի թագավոր		
Արտավազդ Դ	4-6	Արիոբարզանի որդին		
Տիգրան Ե	6 - 12			
Էրատո	6-12			
Վոնոն	12 - 15/16	Պարթևների նախկին արքան		
թափուր	15/16 - 18	հռոմեացիները ձերբակալել էին Վոնոնին		
Զենոն-Արտաշես	18 - 34	Պոնտոսի և Փոքր Հայքի Պոլեմոն /Ասորական աղբյուրներում հիշվում է Մանովա անվանաձևով/ թագավորի որդին		
Արշակ Ա	34-35	Արտավան Գ-ի որդին		
Որոդես Պարթև	35	Արտավան Գ-ի որդին		
Միհրդատ	35-37	Իբերիայի թագավորի եղբայրը		
Կոտիս	37-43	Զենոն-Արտաշեսի (Արշամայի) քրոջ՝ Տրիփոնիայի և Թրակիայի **Կոտիս** թագավորի որդին		
Միհրդատ	43-51			
Հռադամիզդ	51-52	Միհրդատի զարմիկը		
Տրդատ Ա	52-53		Արշակունի	
Հռադամիզդ	53-54			

Արշակունիներ

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Տրդատ Ա	54-58	Պարթևաց Արշակունի Վոնոն Բ-ի որդին, Վաղարշ Ա-ի եղբայրը	Արշակունի	
թափուր	58-59	հռոմեական օկուպացիա		
Տիգրան Զ	59-62	Քաղկիդիկեի թագավոր, Տիգրան Ե–ի եղբոր՝ Ալեքսանդրի որդին		
Տրդատ Ա	62-75		Արշակունի	
Սանատրուկ	75-110		Արշակունի	
Աշխադար	110-113	Բակուր Բ-ի որդին	Արշակունի	
Պարթամասիր	113-114	Բակուր Բ-ի որդին	Արշակունի	
թափուր	114-116	հռոմեական օկուպացիա		
Վաղարշ Ա	116-144	Սանատրուկի որդին	Արշակունի	
Սոհեմոս	144-161	Ասորիքի Եմեսա քաղաքի թագավոր		
Բակուր Ա	161-163		Արշակունի	
Սոհեմոս	164-186			
Վաղարշ Բ	186-198		Արշակունի	
Խոսրով Ա	198-217		Արշակունի	
Տրդատ Բ	217-256	նույնացվում է Խոսրով Բ-ի հետ, 253 թ.-ին պարսիկները գրավեցին Հայաստանի մեծ մասը, նա մինչև սպանվելը շարունակեղ իշխել արևմտյան հատվածներում	Արշակունի	
Արտավազդ Ե	253 - 272	կառավարել է Շապուհի որդու Որմիզդ-Արտաշիրի հետ համատեղ		
Որմզդակ	272-276	Որմիզդ-Արտաշիրի որդին		
Ներսես Սասանյան	276-293[2]	Շապուհ Ա-ի որդին, Պարսկաստանի ապագա արքայից արքա,		
Տրդատ Գ	287-330	287 թ.-ից հռոմեական հատվածի արքա, 293-ից ամբողջ Հայաստանի արքա	Արշակունի	
Խոսրով Գ	330-338		Արշակունի	
Տիրան	338-350		Արշակունի	
Արշակ Բ	350-368		Արշակունի	
թափուր	368 - 370	պարսկական օկուպացիա		
Պապ	370 -374		Արշակունի	
Վարազդատ	374-378		Արշակունի	
Արշակ Գ	378 - 389		Արշակունի	
Խոսրով Դ	387-389		Արշակունի	
Վռամշապուհ	389-414		Արշակունի	
Խոսրով Դ	414-415		Արշակունի	
Շապուհ	415-420	Հազկերտ Բ-ի որդին		
թափուր	420-422	ապստամբություն		
Արտաշես Դ	422-428		Արշակունի	

Մարզպանական Հայաստան

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Վասակ Սյունի	441-450	Պարսիկ Վեհմիհրշապուհ մարզպանից հետո՝ Մարզպանական Հայաստանում նշանակված առաջին հայ մարզպանն էր	Սյունիներ	
Վարդան Մամիկոնյան Քաջ	450-451	Եղել է Հայոց սպարապետ 422-ից, Սասանյան Պարսկաստանի դեմ 450-451-ի հայ ազատագրական շարժման առաջնորդ: 450-ի վերջին Արտաշատում գումարված ժողովում ուխտապահ նախարարներն ու բարձրաստիճան հոգևորականները Վարդան Մամիկոնյանին ընտրել են Հայոց տանուտեր (մարզպան)	Մամիկոնյաններ	
Սահակ Ասպետ Բագրատունի	481-482	Վահանանց ապստամբությունից, պարսկական կայազորի ջախջախումից և պարսիկ մարզպան Ատրվշնապսի տապալումից (481) հետո ընտրվել է Հայոց մարզպան ու տանուտեր	Բագրատունիներ	
Վահան Մամիկոնյան	482-505	Հայրենասեր նախարարները խմբվել են Վահան Մամիկոնյանի շուրջը և նրա գլխավորությամբ ապստամբել Պարսից տիրապետության դեմ (Վահանանց պատերազմ): Հայոց սպարապետ, մարզպան (մոտ 487-505)	Մամիկոնյաններ	
Վարդ Մամիկոնյան	505-510	Հայոց սպարապետ մոտ 486-ից, Հայոց մարզպան՝ մոտ 505-509-ին	Մամիկոնյաններ	
Մժեժ Գնունի Հոնահաղթ	517-548	Սասունում իշխող հայ նախարար, որը 517-ին Կավադ I Պարսից արքայի կողմից նշանակվել է Հայոց մարզպան		
Վարդան Մամիկոնյան Փոքր	571-576	Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Իր շուրջ համախմբելով հայրենասեր ուժերի, Հայոց կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենցու աջակցությամբ գումարել է նախարարների գաղտնի խորհրդակցություն (571), որտեղ ընտրվել է իշխանապետ և որոշել զինված պայքար մղել պարսկական տիրողների դեմ	Մամիկոնյաններ	
Մուշեղ Մամիկոնյան Դուքս	576-591	Հայոց Տարոնի գավառի նախարար, որը Վարդան Մամիկոնյան Փոքրից հետո (576), Բյուզանդիայի կայսեր կողմից կարգվեց պարսկա-բյուզանդական պատերազմում բյուզանդիայի կողմից մարտնչող՝ հայկական զորագնդերի հրամանատար, իսկ հետագայում (պատերազմական գործողությունների ընթացքում) բյուզանդիայի իշխանությանն անցած ամբողջ հայկական երկրամասի (ներառյալ նախկինում կայսրության իշխանության ներքո գտնվող հայկական տարածքների) ժամանակավոր կառավարիչ՝ դուքս	Մամիկոնյաններ	
Սմբատ Բագրատունի Հաղթանդամ	591-592	Հայ զորահրամանատար, նախարար: Հայոց դուքս Մուշեղ Մամիկոնյանի սպանվելուց հետո, ապստամբել և քաշվել է Հայաստանի Խաղտյաց լեռները: Հայ նախարարները սպանել են կայսրի կողմից Հայաստանի կառավարիչ նշանակված բյուզանդացի Հովհաննեսին և իրենց իշխանապետ ընտրել Սմբատին, որոշել միասնական ուժերով դուրս գալ հունաց կայսրի իշխանության տակից ու իրենց թագավորությունն ունենալ	Բագրատունիներ	
Սմբատ Բագրատունի Բազմահաղթ	592-627	Հայ զորավար Սմբատ Բագրատունին աչքի ընկնելով պարսից արքա Խոսրով II Ափավրեզի մղած պատերազմներում և դառնալով վերջինիս սիրելին, մեծ պատվով նշանակվել է Հայոց մարզպան, իսկ հետո նաև Վրկանից աշխարհի մարզպան, պահպանելով իր Հայոց մարզպանի իրավունքները	Բագրատունիներ	
Վարազտիրոց Բագրատունի	628-634	Վարազտիրոց Բագրատունին Սմբատ Բազմահաղթի որդին էր: Հայոց տանուտեր և մարզպան է դարձել (628-634) Կավադ II-ի օրոք	Բագրատունիներ	
Մժեժ Գնունի Կյուրապաղատ	629-635	Հայազգի Բյուզանդական զորավար: Հերակլ կայսրը 629-ին Մժեժ Գնունուն նշանակել է Բյուզանդիայի արևելյան շրջանների (հայկական տարածքների) կառավարիչ՝ կյուրապաղատ		
Դավիթ Սահառունի	635-638	Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ 635-638-ին, Դավիթ Սահառունին հանդիսացել է Հայոց մարզպանական շրջանի վերջին իշխանավորը		

Արաբական տիրապետություն, հայոց իշխաններ

Թվականները ներկայացված են ըստ ցանկում նշված համապատասխան անձանց վերաբերվող ՀՍՀ հոդվածների:

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Թեոդորոս Ռշտունի	639 - 654	Հայաստանում Պարսկաստանի ու Բյուզանդիայի գերիշխանության անկումից հետո միավորեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը և դարձավ նրա փաստացի կառավարիչը, 652 թ.-ից հետո արաբների կողմից ճանաչվեց Հայոց, Վրաց և Աղվանից գերագույն իշխան: 643 թ.-ին ձերբակալվում է Բյուզանդիայի կայսեր կողմից, իսկ հայոց իշխան է դառնում Վարազ-Տիրոց Բ Բագրատունին, որը կարճ ժամանակ հետո մահանում է և կրկին վերադարձնում են Ռշտունուն[3]	Ռշտունի	
Համազասպ Դ Մամիկոնյան	654 - 661		Մամիկոնյան	
Գրիգոր Ա Մամիկոնյան	661 - 685		Մամիկոնյան	
Աշոտ Բ Բագրատունի	685 - 689		Բագրատունի	
Ներսեհ Կամսարական	689 - 693		Կամսարական	
Սմբատ Բյուրատյան Բագրատունի	693 - 726	701 թ.-ին արաբները վերջնականորեն գրավեցի Անդրկովկասը և կազմեցին Արմինիա վարչամիավորը	Բագրատունի	
Արտավազդ Կամսարական	726 - 732		Կամսարական	
Աշոտ Բագրատունի Կուրացյալ	732 - 749	փաստացի 726 թ.-ից, կուրացվել է Գրիգոր Բ Մամիկոնյանի կողմից, որոշակի ժամանակահատված իշխանությունը եղել է Գրիգոր Բ Մամիկոնյանի ձեռքում (748-750), որը գլխավորել է ապստամբությունը արաբների դեմ, իսկ Աշոտը հրաժարվել էր մինչև վերջ աջակցեր[4]	Բագրատունի	
Մուշեղ Մամիկոնյան	749 - 753		Մամիկոնյան	
Սահակ Գ Բագրատունի	753 - 770	775 թ.-ի ապրիլի 24-ին (25-ին) Արձն գյուղի ճակատամարտում զոհվեցին Մուշեղ Մամիկոնյանը, Սահակ և Սմբատ Բագրատունիները և այլք, այդ դեպքերից հետո Մամիկոնյանները, Ռշտունիները, Կամսարականները և այլ տոհմեր գաղթեցին Բյուզանդիա	Բագրատունի	
Սմբատ Է Բագրատունի	770 - 775	Աշոտ Բագրատունի Կուրացյալի որդին	Բագրատունի	
Տաճատ Անձևացի	781 -785		Անձևացի	
Աշոտ Բագրատունի Մսակեր	790 - 826		Բագրատունի	
Բագրատ Բագրատունի	826 - 851		Բագրատունի	
Սմբատ Բագրատունի Աբլբաս	852 - 855		Բագրատունի	
Աշոտ Բագրատունի	855 - 885	862 թ.-ից իշխանաց իշխան, իսկ 885 թ.-ից պաշտոնապես ճանաչվեց Հայոց և Վրաց թագավոր	Բագրատունի	

Բագրատունիներ

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Աշոտ Ա	885-890		Բագրատունի	
Սմբատ Ա	890-914		Բագրատունի	
Աշոտ Բ	914-928		Բագրատունի	
Աբաս Ա	928-953		Բագրատունի	
Աշոտ Գ	953-977		Բագրատունի	
Սմբատ Բ	977-989		Բագրատունի	
Գագիկ Ա	989-1020		Բագրատունի	
Հովհաննես-Սմբատ	1020-1041		Բագրատունի	
Աշոտ Դ	1021-1040	կառավարել է Շիրակի և շրջակա գավառներից դուրս	Բագրատունի	
Վահրամ Պահլավունի	1041-1042	ժամանակավոր, մինչ Գագիկ Բ-ի թագադրելը		
Գագիկ Բ	1042-1045	Աշոտ Դ-ի որդին, կալանավորվել է Բյուզանդիայի կայսեր կողմից և ստիպողաբար հրաժարվել գահից, փոխարենը ստացել է Պիզու և Կալոն Պեղատ քաղաքները Կապադովկիայում, սպանվել է 1079 թ.-ին	Բագրատունի	

Կարսի (Վանանդի) թագավորություն

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Մուշեղ Կարսեցի	963-984	Աշոտ Գ-ի եղբայրը	Բագրատունի	
Աբաս Բագրատունի	984-1029		Բագրատունի	
Գագիկ Կարսեցի	1029-1064	1064-ին թագավորությունը հանձնել է Բյուզանդիային	Բագրատունի	

Տաշիր-Ձորագետի (Լոռվա) թագավորություն

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Գուրգեն Կյուրիկե	979 - 989	Աշոտ Գ-ի որդին, կառավարել է 972 թ.-ից, արքայի կոչում ստացել է 979-ից	Կյուրիկյան	
Դավիթ Ա	989-1050		Կյուրիկյան	
Գուրգեն Բ	1050-1089		Կյուրիկյան	
Դավիթ Բ	1089-1113	կառավարել է եղբոր Աբասի, հետ, 1113 թ.-ից հետո, երբ թագավորությունը անցավ Վրաստանին, 1113 թ.-ից մինչև 1145 թթ.-ները կառավարել է Մածնաբերդում	Կյուրիկյան	
Աբաս Կյուրիկյան	1089-1113	1113 թ.-ից հետո կառավարել է Տավուշում մինչև 1145 թ.-ը	Կյուրիկյան	

Մաժնաբերդի իշխանություն

Տվյալները վերցված են Հայկական Սովետական Հանրագիտարանից.[5]

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Դավիթ Բ	1113-1145		Կյուրիկյան	
Կյուրիկե Գ	1145-1170		Կյուրիկյան	
Աբաս Բ	1170-1176		Կյուրիկյան	
Աղսարթան Ա	1176- ?		Կյուրիկյան	
Աղսարթան Բ	-		Կյուրիկյան	
Թաղիադին Ա	-		Կյուրիկյան	
Սարգիս Ա	-		Կյուրիկյան	

Սյունիքի թագավորություն

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Սմբատ Ա Սահակյան	987 -998		Սյունի	
Վասակ Ա	998-1040		Սյունի	
Սմբատ Բ Աշոտյան	1040-1051[6]	Վասակի քեռայր Աշոտի որդին	Աշոտյան	
Գրիգոր Ա Աշոտյան	1051-1072	Սմբատ Բ-ի եղբայրը	Աշոտյան	
Սենեքերիմ Սևադյան	1072 -1094/1096	Շահանդուխտ թագուհու եղբայրն է, Դարբանտի Սևադա թագավորի որդին[7]		
Գրիգոր Բ Սենեքերիմյան	1094/1096-1166	Սենեքերիմի որդին		
Հասան Խաչենցի	1166 -1170	Գրիգոր Բ-ի Կատայի ամուսինը, Խաչենի իշխանը		

Վասպուրականի թագավորություն

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Գագիկ Արծրունի	908 - 943		Արծրունի	
Դերենիկ-Աշոտ	943 - 959	Գագիկի որդին	Արծրունի	
Աբուսահլ-Համազասպ	959 - 972	Գագիկի որդին, Աբուսահլ-Համազասպի մահից հետո որդիները բաժանեցին թագավորությունը 3 մասի, սակայն հերթով տիրացան Վան քաղաքի գահին	Արծրունի	
Աշոտ-Սահակ	972 - 983/991	Աբուսահլ-Համազասպի որդին	Արծրունի	
Գուրգեն-Խաչիկ	983/991 - 1003	Աբուսահլ-Համազասպի որդին	Արծրունի	
Սենեքերիմ Արծրունի	1003 - 1021	Աբուսահլ-Համազասպի որդին, 1021 թ.-ին թագավորությունը զիջեց Բյուզանդիային, փոխարենը ստանալով Կապադովկիայի Սեբաստիա քաղաքը, մահացել է 1026 թ.-ին	Արծրունի	

Տայքի իշխանություն

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Դավիթ Կյուրոպաղատ	966 -1000		Բագրատունի	

Կիլիկիայի հայկական պետություն

Իշխանության շրջան

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Ռուբեն Ա	1080-1095	Ըստ ավանդության Հայոց Բագրատունի վերջին թագավոր Գագիկի մերձավորներից էր: Անիի անկումից հետո հաստատվում է Կորոմոզոլ գյուղում:	Ռուբինյան	
Կոստանդին Ա	1095-1100	Ընդարձաելով իր տիրույթները՝ տիրում է Վահկային ու շրջակա որոշ բերդերի: Աճյունն ամփոփվում է Կաստաղոնի վանքում:	Ռուբինյան	
Թորոս Ա Սեբաստոս	1100-1129	Կրել է «Մեծ իշխան Հայոց» տիտղոսը, ինչպես նաև հունական «Սեբաստոս» և «Պռոտոսեբաստոս» տիտղոսը: Երկիրը կառավարել է իր եղբայր Լևոնի հետ միաժամանակ, սակայն իրարից անջատ իշխանություններում: Ունեցել է մի որդի Կոստանդին անունով, որին թունավորել են: Կառուցում է Մաշկևորի և Դրազարկի վանքերը: Աճյունն ամփոփված էր Դրազարկում:	Ռուբենյան	
Լևոն Ա	1129-1137	Կրել է «Իշխան Հայոց», ինչպես նաև հունական «Սեբաստոս» տիտղոսը: Սկզբում կառավարել է Ամանոսյան լեռներից մինչև Մարաշ ընկած տիրույթները, ապա, եղբոր մահից հետո՝ ամբողջ երկիրը: 1137 թ-ին Հովհաննես Կոմնենոս կայսրը գրավում է Կիլիկիան ու գերում Լևոնին, նրա կնոջն ու որդիներ Թորոսին ու Ռուբենին: Մյուս որդիներ Ստեփանեն և Մլեհը ապաստան են գտնում Եդեսիայի կոմս Ժոսլեն II-ի արքունիքում	Ռուբինյան	
Թորոս Բ	1144/45-1168	Հովհաննես Կոմնենոս կայսեր մահից հետո փախչում է Կոստանդնուպոլսից ու վերադառնալով Կիլիկիա, ազատագրում Հայոց իշխանությունը: Կոչվել է «Մսիսի, Անավարզայի և Վահկայի սեբաստոս»:Դառնալով կրոնավոր՝ կյանքի վերջին տարիներն անցկացնում է վանքում: Մահից հետո իշխանությունն անցնում է մանկահասակ որդի Ռուբենին (Ռուբեն Բ՝ 1169-70 թթ.), որը մահանում է 1170-ին Հռոմկլայում	Ռուբինյան	
Մլեհ	1170-1175	Մլեհը իշխանության է գալիս իր եղբորորդի Ռուբենի մահից հետո: Հալեպի ամիրա Նուր էդ-Դինի հետ դաշնակցելով, ազատագրում է Դաշտային Կիլիկիայի Անավարզա, Մսիս և Տարսոն քաղաքները: 1175-ին սպանվում է: Ուներ դուստր Գրիգոր Դ կաթողիկոսի քրոջ հետ ամուսնությունից և ապօրինածին որդի Գեորգ անունով:	Ռուբինյան	
Ռուբեն Գ	1175-1187	Ռուբենը Մլեհ և Թորոս Բ իշխանների եղբայր Ստեփանեի որդին էր: Գահ բարձրանալուց հետո պատժում է Մլեհին սպանողներին: Տորոնի տեր Հումֆրիդի թոռ իզաբելլայի հետ ամուսնությունից ունենում է 2 դուստր՝ Ալիս և Ֆիլիպա: Անհեռատեսության հետևանքով գերի է ընկնում Անտիոքի պրինցի մոտ, ապա խոշոր փրկագնի դիմաց ազատվելով, քաշվում է վանք, որտեղ էլ մահանում է:	Ռուբինյան	
Լևոն Բ	1187-1198	Ռուբեն Գ իշխանի եղբայրն էր: Գահին բազմել է որպես վերջինիս դուստրերի խնամակալ: Կառավարման հենց սկզբնական շրջանից սկսած ընդարձակում է երկրի տարածքը՝ գրավելով նաև ռազմավարական Պաղրաս ամրոցը Անտիոքի հետ սահմանին: Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ի կնոջ զարմուհու հետ ամուսնությունից ուներ դուստր Ռիթա անունով:	Ռուբինյան	

Թագավորության շրջան

Անուն	Գահակալման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Լևոն Բ	1198-1219	1198 թ. հունվարի 6-ին Սրբազան Հռոմեական կայսեր ուղարկած թագով Տարսոնի Մայր տաճարում թագադրվում ու օծվում է որպես Հայոց թագավոր: Նրան թագ էր ուղարկել նաև Բյուզանդիայի կայսրը, ինչպես նաև կրոնական որոշ ձևական զիջումների արդյունքում նրան ճանաչել էր նաև Հռոմի Պապը: Նրա օրոք Կիլիկիո Հայոց թագավորությունը դառնում է Մերձավոր Արևելքի տվյալ ժամանակի ամենահզոր քրիստոնյա պետությունը: Երկրորդ անգամ ամուսնանում է Կիպրոսի արքայադուստր Սիպիլի հետ, որից ունենում է Զաբել դստերը: Մահանում է 1219 թ. մայիսի 2-ին: Սիրտը ամփոփվում է Ակներում, իսկ մարմինը՝ Սսում:	Ռուբինյան	
Զաբել թագուհի և Փիլիպոս թագավոր	1222-1225(Զաբել և Փիլիպոս),1219-1222/1225-26(Զաբել)	1216 թ. Լևոն թագավորը գահաժառանգ է հռչակում իր դուստր Զաբելին, որի խնամակալն էր Սիր Ատանը, ապա՝ Կոստանդին Գունդստապլը: 1222 թվականին Արքունի տյանի որոշմամբ ամուսնանում է Անտիոքի գահաժառանգ Փիլիպոսի հետ, որը ձերբակալվում և մահանում է բանտարկության մեջ 1225 թ-ին:	Ռուբինյան	
Զաբել թագուհի և Հեթում Ա թագավոր	1226-1252(Զաբել), 1269(Հեթում)	Երկրորդ անգամ ամուսնանում է Կոստանդին պայլի որդի Հեթումի հետ 1226 թ-ին: Ունենում են 3 որդի՝ Ռուբեն, Թորոս և Լևոն, և 5 դուստր: Իրավական տեսակետից Հեթում թագավորը Զաբել թագուհու հետ կառավարել է որպես թագակիր-գործակից, այսինքն՝ նա թագավոր էր միայն այն պատճառով, որ Զաբել թագուհու ամուսինն էր: Զաբել թագուհին մահանում է 1252 թվականին: Հեթում թագավորի և Կոստանդին թագավորահոր ջանքերով կնքվում է հայ-մոնղոլական պայմանագիր, որով կանխվում է մոնղոլ զորքերի կողմից երկրի ասպատակումը: 1266 թվականին Մառի ճակատարամտում հայոց զորքերը պարտություն են կրում մամլյուքյան զորքերից: Մարտում սպանվում է արքայորդի թորոսը, իսկ արքայորդի Լևոնը գերի է ընկնում ու ազատվում մոտ 1.5 տարի անց: Կյանքի վերջին տարիներին Հեթում թագավորը գահը հանձնում է իր որդի Լևոնին ու, քաշվելով վանք, ընդունում է Մակար անունը: Մահանում է 1270 թ. ու թաղվում Դրազարկի վանքում:	Ռուբինյան	
Լևոն Գ	1269-1289	Փաստացի իշխանության է անցնում 1268 թ.-ին, սակայն չի օծվում թագավոր այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի էր իր հայր Հեթումը: Այդ շրջանում հիշատակվում է «Պարոն Հայոց» տիտղոսով: Թագավոր է օծվում 1271 թ. հունվարի 6-ին Տարսոնի Մայր տաճարում: Ամուսնացած էր իշխանուհի Կեռանի հետ: Թագավորը ունեցել է 15-ից 17 երեխա, որոնցից 2-ը՝ ապօրինածին:	Ռուբինյան	
Հեթում Բ և եղբայրներ	1289-1306	Հեթում Բ-ն Լևոն Գ թագավորի՝ ողջ մնացած որդիներից ավագն էր: Գահը անցել է նրան ավագության իրավունքով, սակայն չի թագադրվել: Ամուսնացած չի եղել: Նրա օրոք՝ 1282 թ-ին մամլյուքները գրավում են կաթողիկոսանիստ Հռոմկլան: 1293 թ-ին հրաժարվում է գահից՝ հօգուտ իր եղբայր Թորոսի, իսկ ինքը կրոնավոր է դառնում՝ ընդունելով Հովհաննես անունը: Սակայն 1294 թ-ին նորից վերադառնում է գահին: Ապա նորից հրաժարվում գահից 1296 թ-ին: Թորոսը երկիրը կառավարել է տեղապահի կարգավիճակով և կրել է «Պարոն Հայոց» տիտղոսը: 1296-98 թթ. գահը զավթում է նրանց մյուս եղբայր Սմբատը, որը կարգված է թագապահ, քանի դեռ Հեթումը և Թոոսը բացակայում էին երկրից: Նա 1296 թ-ին իրեն թագավոր է հռչակում ու օծվում Սսում: Երբ Հեթումն ու Թորոսը վերադառնում են Հայոց թագավորություն, Կեսարիայի մոտ Սմբատը ձերբակալում է նրանց՝ Հեթումին փակելով Մոլևոնում, իսկ Թորոսին՝ Բարձրաբերդում, ապա սպանել է տալիս վերջինիս ու կուրացնում Հեթումին: 1298 թ-ին նրանց մյուս եղբայր Կոստանդինը ապսամբում է Սմբատի դեմ ու գահընկեց անելով նրան, բանտից ազատում է իր ավագ եղբայր Հեթումին ու վերադարձնում նրան գահը, իսկ ինքը կառավարում է երկիրը, կրելով «Պարոն Հայոց» տիտղոսը: Սակայն հետո Կոստանդինը բռնազավթում է գահը, չնայած երբեք չի թագադրվում ու օծվում: 1299 թ-ին Հեթումը ապաքինվում է ու վերցնում իշխանությունն իր ձեռքը, ապա աքսորում է Սմբատին ու Կոստանդինին դեպի Կոստանդնուպոլիս: Դրանից հետո Հեթումը գահաժառանգ է հայտարարում իր սպանված եղբայր Թորոսի մանկահասակ որդի Լևոնին, որը թագադրվում է 1306 թ-ին, խնամակալ ունենալով Հեթում Բ-ին: Լևոնը և Հեթումը սպանվում են 1307 թ-ին մոնղոլ զորավար Բիլարղուի ձեռքով:	Ռուբինյան	
Օշին	1308-1320	Օշինը Հեթում Բ-ի եղբայրն էր: Երկրից վտարում է իր եղբորն ու եղբորորդուն, ինչպես նաև բազում իշխաններին սպանած Բիլարղուին, ապա մոնղոլաց խանի մոտ բողոք ներկայացնելով իր եղբայր Ալինախի միջոցով, հասնում է Բիլարղուի մահապատժին: Նրա կառավարման տարիները համեմատաբար խաղաղ անցան: Առաջին ամուսնությամբ ամուսնացած էր Հեթում Կոռկիոսացու դուստր Զաբելի հետ (մահ. 1310 թ.), որից ծնվել էր ապագա թագավոր Լևոն Ե-ն, իսկ երկրորդով՝ Սիցիլիայի թագավոր Ռոբերտի զարմուհի Յովհաննայի հետ 1316 թ-ին: Մահանում է 1320 թ.-ին և թաղվում Դրազարկի վանքում:	Ռուբինյան	
Լևոն Ե	1320-1342	Գահը ժառանգում է 10 տարեկանում: Օծման արարողությունը տեղի է ունեցել 1321 թ-ին: Դեռևս հոր կենդանության օրոք հռչակվել էր գահակից-թագավոր: Նրա խնամակալներն էին Կոռիկոսի տեր Օշինը, նրա եղբայր Կոստանդինը և Նղրի տեր Հեթումը ու նրա եղբայր Պաղտին մարաջախտը, ընդ որում՝ առաջին երկուսը նրա մորեղբայրներն էին: Ամուսնացած էր Օշին Պայլի դուստր Զաբելի հետ (1321 թ.): Պետության փաստացի կառավարիչ է դառնում Օշին պայլը, որը, ի թիվս իր շատ հակառորդների, հաշվեհարդար է տեսնում նաև Լևոնի հորաքույր, Ամորի Լուսինյանի կին Զաբելի և նրա որդիներից որոշների հետ: Չափահաս դառնալով Լևոնը սպանել է տալիս իր մորեղբայրներ Օշինին և Կոստանդինին, նաև իր կնոջը: Երկրորդ անգամ ամուսնացել է 1331 թ-ին Կիպրոսի Հենրի II թագավորի այրի և Սիցիլիայի Ֆրեդերիկ թագավորի դուստր Կոնստանսի հետ: Մահանում է 1341-ի վերջին կամ 1342-ի սկզբին:	Ռուբինյան	
Կոստանդին Բ (Գի Լուսինյան)	1342-1344	Լևոն Ե թագավորի հորաքեռորդին էր՝ Կիպրոսի գահի բռնակալ Ամորի Լուսինյանի և Լևոն Գ թագավորի դուստր Զաբելի որդին: Քանի որ Լևոն թագավորը անզավակ էր, ապա նա կտակով գահը հանձնում է Բյուզանդիայում գտնվող Գիին: Նա ժամանում է Հայոց թագավորություն ու թագադրվում 1342 թ-ի հոկտեմբերին: Սպանվում է 1344 թ-ին:	Ռուբինյան	
Կոստանդին Գ	1344-1362	Պաղտին մարաջախտի որդին էր ու ընտրվել էր որպես թագավոր Արքունի ատյանի կողմից: Նա Կոստանդին Գունդստապլի ծոռն էր (կամ թոռան թոռը), իսկ մայրը Սմբատ Սպարապետի թոռն էր: Նրա օրոք երկիրը ունենում է մեծ տարածքային կորուստներ ու պարփակվում լեռնային մասում: Ամուսնացած էր Օշին Պայլի և Յովհաննա թագուհու դուստր մարիունի հետ: Ունեցել են 2 որդի՝ Օշին և Լևոն անուններով, որոնք մահացել են մանուկ հասակում: Կոստանդինը մահանում է 1362 թ-ի դեկտեմբերի 21-ին:	Ռուբինյան	
Կոստանդին Դ	1365-1373	Մինչև Կոստանդինի գահակալումը երկիրը 2 տարի կառավարվում է նախորդ թագավորի այրի Մարիոն թագուհու կողմից: Նա Կոստանդին Գ ի եղբայր և Նղիրի տեր Հեթում ջամբռլայի որդին էր: Ըստ հովհան դարդելի՝ սպանվում է հայ իշխաների ձեռքով, քանի որ որոշել էր հաշտություն կնքել մամլյուքների հետ ու երկիրը հանձնել նրանց:	Ռուբինյան	
Լևոն Զ	1374-1375	Լևոն Գ թագավորի դուստր Զաբելի և Ամորի Լուսինյանի որդի Հովհաննես-Ջեհան իշխանի որդին էր: Մինչ նա կժամաներ Հայոց թագավորություն, Արքունի ատյանի որոշմամբ 1373 թ-ին երկրի կառավարիչ է նշանակվում Կոստանդին Գ-ի այրի Մարիոն թագուհուն: Լևոնը թագադրվում է 1374 թ.-ի սեպտեմբերի 14-ին: 1375 թ-ի ապրիլին Հալեպի մելիք Աշրգ-Թեմուրը գրավում է Սիսը ու գերում թագավորական ընտանիքը: 1382-ին Արագոնի և Կաստիլիայի թագավորների տված փրկագնով ազատվում է գերությունից ու մեկնում Եվրոպա: Մահանում է 1393 թ-ին Փարիզում:	Ռուբինյան	

Զաքարյան Հայաստան (Զաքարյան իշխանապետություն)

Ցուցակում ներկայացված չեն համակառավարիչները: 1220 թ.-ից սկսվեցին մոնղոլական և Ջալալլեդդինի արշավանքները, իսկ 1236 թ.-ից սկսվեց նվաճողական արշավանքները, 1259 թ.-ից Հայաստանը հիմնականում մոնղոլական տիրապետության տակ էր:

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Դինաստիա	Պատկեր
Զաքարե Բ Զաքարյան	1191 - 1212	Սարգիս Զաքարյան Երկայնաբազուկի և Սահակադուխտ Արծրունու ավագ որդին, Հայ-վրացական զորքերի գերագույն հրամանատար՝ ամիրսպասալար, Հայոց իշխանապետ	Զաքարյան	
Իվանե Ա Զաքարյան	1212 - 1227[8]	Զաքարե Բ-ի կրտսեր եղբայրը, Զաքարե Բ-ի մահից հետո Հայոց իշխանապետ, ստանալով ամիրսպասալարի, իսկ 1213-ին նաև՝ աթաբեկի (թագավորահայր) պաշտոնները	Զաքարյան	
Ավագ Զաքարյան	1227 - 1250	Իվանեի տղան, աթաբեկ (թագավորահայր), հոր մահից հետո՝ Հայոց իշխանապետ	Զաքարյան	
Զաքարե Գ Զաքարյան	1250 - 1259	Զաքարե Բ-ի թոռը՝ Շահնշահ Ա Զաքարյանի որդին, Հայոց իշխանապետ և հայ-վրացական զորքերի ամիրսպասալար 1251-ից, 1259 թ.-ին մահապատժի է ենթարկվել	Զաքարյան	
Սմբատ Օրբելյան	1263-1271	Սյունիքի Օրբելյանների տոհմից, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հորեղբայրը: Գոնցա թագուհու մահից հետո, Սմբատի միջնորդությամբ վրաց Դավիթ թագավորը իրեն երկրորդ կին է ուզում Խավանդ Եսուգան Նախիջևանցուն և Սմբատին դարձնում իր մանկահասակ որդի Դեմետրեի խնամակալը՝ աթաբեկ (թագավորահայր), նրա տնօրինությանը թողնելով Հայոց իշխանապետի գործակալությունը	Օրբելյան	
Սադուն Բ Արծրունի	1271-1282	Մահկանաբերդի Արծրունիների տոհմից, Սադուն Ա Արծրունու թոռը: Օգտագործելով մոնղոլ իլխանության հետ կապերը և Ավագ Զաքարյանի դուստր՝ Խոշաք Զաքարյան իշհանուհու հովանավորությունը (եղել է Խոշաքի կալվածքների կառավարիչը)՝ Սադուն Արծրունին բարձր դիրքի է հասել վրաց Դեմետր թագավորի արքունիքում, ամուսնացել է Դեմետրի քույր Թամարի հետ և ստացել Դմանիս քաղաքը՝ շրջակայքով, գրավելով աթաբեկի ու ամիրսպասալարի պաշտոնները և Սմբատ Օրբելյանից հետո ճանաչվել Հայոց իշխանապետ	Արծրունի	
Տարսայիճ Օրբելյան	1284-1290	1282-1283 թ.թ. իլխանության գահի համար բռնկված պայքարի ժամանակ Տարսայիճ Օրբելյանը զինակցել է Արղունին և նրա հաղթանակից հետո՝ ճանաչվել Հայոց իշխանապետ, և Ի հատուցումն իր ծառայությունների՝ վրաց Դեմետրե թագավորի կողմից նշանակվել աթաբեկ ու ամիրսպասալար	Օրբելյան	
Խութլու Բուղա Արծրունի	1290-1293	Սադուն Բ Արծրունու ավագ որդին: 1289 թ. Արղուն իլխանի դեմ ամիր Բուղայի ապստամբության ճնշումից և վրաց թագավոր Դեմետրեի սպանվելուց հետո, Խութլու Բուղայի գործուն միջամտությամբ գահը հանձնվել է Նարին-Դավթի որդի Վաղթանգին: Վերջինս որպես հատուցում, Խութլու Բուղային է հանձնել վրաց արքունիքի աթաբեկությունը և ամիրսպասալարի պաշտոնը, Արղուն իլխանի համաձայնությամբ 1290 թ. ստանձնել է Հայոց իշխանապետի գործակալությունը	Արծրունի	
Շահնշահ Բ Զաքարյան	1293-1320	Զաքարե Գ Զաքարյանի որդին: Շահնշահ Բ-ն 1293 թ. (Խութլու Բուղայի մահապատժից հետո) դարձավ հայ-վրաց զորքերի ամիրսպասալար, իսկ իր եղբայր Իվանեն մսախուրթուխուցես: Ղազան իլխանի կողմից ճանաչվել է Հայոց իշխանապետ	Զաքարյան	
Զաքարե Դ Զաքարյան	1320-1333	Ավագ Զաքարյանի թոռը (Խոջա Սահիբ-Ջուվեյնու և Խոշաք Զաքարյան իշխանուհու ավագ որդին): Ուլջեյթու իլխանի համաձայնությամբ վերադարձել է Հայաստան (Արղուն իլխանի կողմից իր հոր սպանությունից հետո, խուսափելով հալածանքներից փախել էր Աբխազիա): Շահնշահ Բ-ի մահից հետո, ստանձնել է հայ-վրացական զորքերի ամիրսպասալարի պաշտոնը և վարել Հայոց իշխանապետի գործակալությունը	Զաքարյան	
Բուրթել Երկարակյաց Օրբելյան	1333-1349	Էլիկում Օրբելյանի որդին: 1338-ին Չոբանյան Հասան-Քուչակը իր ձեռքը վերցրեց Հուլավյան իլխանության մեծագույն մասը (և գրեթե ամբողջ Հայաստանը): Մոնղոլ-թաթարական գահակալական կռիվների ասպարեզում հայտնված Հայոց իշխանապետությունում Բուրթել Երկարակյացին հաջողվեց իր գահերեցության ներքո վերամիավորել Զաքարյան Հայաստանի մյուս հայ իշխանությունները և ավատատերերի տրոհված զինվորական ուժերը: Հայ ավատատերերին հնազանդության բերելու նպատակով Հասան-Քուչակը վարել է նրանց սիրաշահելու քաղաքականություն և հայ իշխանների ավագությունը իր ձեռքը վերցրած Բուրթել Մեծ Օրբելյանին՝ 1340-ին նշանակել Իլխանության մայրաքաղաքներ Սուլթանիայի և Թավրիզի քաղաքագլուխ-ամիրա, ճանաչելով նրա Հայոց իշխանապետի իրավունքները	Օրբելյան	
Շահնշահ Գ Զաքարյան	1349-1358	Շահնշահ Բ-ի թոռը (վաղամեռիկ Զաքարիայի որդին): Չափահաս դառնալով, իր հորեղբայր Վահրամից ստացել է Զաքարյանների իշխանական տան ավագությունը և դարձել վրաց արքունիքի աթաբեկն ու ամիրսպասալարը	Զաքարյան	
Զազան Զաքարյան	1358-1386	Շահնշահ Գ Զաքարյանի որդին: Հոր մահից հետո ստանձնել է հայ-վրաց զորքերի ամիրսպասալարի պաշտոնը	Զաքարյան	

Հայաստանի Առաջին Հանրապետություն

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Կուսակցական պատկանելություն	Պատկեր
Արամ Մանուկյան	05.1918 - 07.1918	նորաստեղծ հանրապետության ղեկավար (1918 մարտից Երևանի նահանգի դիկտատոր), ապա առաջին ՆԳ նախարար, մահացել է 1919 թ.-ին բծավոր տիֆից	ՀՅԴ	
Հովհաննես Քաջազնունի	07. 1918 - 05.1919	վարչապետ 06.1918 թ.-ից, բայց Թիֆլիսում էր գտնվում	ՀՅԴ	
Ալեքսանդր Խատիսյան	05.1919 - 05.1920	վարչապետ	ՀՅԴ	
Համազասպ Օհանջանյան	05.1920 - 11.1920	վարչապետ	ՀՅԴ	
Սիմոն Վրացյան	11.1920 - 12.1920	վարչապետ	ՀՅԴ	

Լեռնահայաստան

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Կուսակցական պատկանելություն	Պատկեր
Գարեգին Նժդեհ	25.12.1920 - 01.07.1921	սպարապետ, ապա վարչապետ, իսկ վերջում Ռազմական նախարար և սպարապետ	ՀՅԴ	
Սիմոն Վրացյան	01.06.1921 - 09.07.1921[9]		ՀՅԴ	

Հայաստանի Հանրապետություն

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Կուսակցական պատկանելությունը նախագահության ժամանակ	Պատկեր
Լևոն Տեր-Պետրոսյան	1991 - 1998 (վերընտրվել է 1996 թվականին)	ՀՀ 1-ին նախագահ	Հայոց համազգային շարժում	
Ռոբերտ Քոչարյան	1998 - 2008 (վերընտրվել է 2003 թվականին)	ՀՀ 2-րդ նախագահ	անկուսակցական	
Սերժ Սարգսյան	2008 - 2018.23.04 (վերընտրվել է 2013 թվականին)	ՀՀ 3-րդ նախագահ	Հայաստանի հանրապետական կուսակցություն	
Արմեն Սարգսյան	2018.04.09 - 2022.02.01	ՀՀ 4-րդ նախագահ	անկուսակցական	
Ալեն Սիմոնյան	2022.02.01 - 2022.03.13	ՀՀ նախագահի պաշտոնակատար	Քաղաքացիական պայմանագիր	
Վահագն Խաչատուրյան	2022.13.03 – ներկա	ՀՀ 5-րդ նախագահ	անկուսակցական	

2015 թվականի սահմանադրության փոփոխությունից հետո երկրի փաստացի ղեկավարը վարչապետն է:

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Կուսակցական պատկանելությունը նախագահության ժամանակ	Պատկեր
Նիկոլ Փաշինյան	մայիսի 8, 2018 - հոկտեմբերի 16, 2018 հունվարի 14, 2019 - ներկա	ՀՀ 16-րդ վարչապետ (Առաջին վարչապետը ՀՀ խորհրդարանական համակարգում)	Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն	

Արցախի Հանրապետություն

Անուն	Կառավարման ժամանակաշրջան	Ծանոթագրություններ	Կուսակցական պատկանելություն	Պատկեր
Արթուր Մկրտչյան	01. 1992 - 04.1992[10]	ԳԽ նախագահ, զոհվել է	ՀՅԴ	
Գեորգի Պետրոսյան	04. 1992 - 06.1993	ԳԽ նախագահի պաշտոնակատար	ՀՅԴ	
Կարեն Բաբուրյան	1993 - 1994	ԳԽ նախագահի պաշտոնակատար		
Ռոբերտ Քոչարյան	1994 - 1997	ԳԽ - կողմից է նշանակվել, 1996 թ.-ին ընտրվել է համաժողովրդական ընտրություններով	անկուսակցական	
Լեոնարդ Պետրոսյան	03. 1997 - 09.1997	նախագահի պաշտոնակատար	անկուսակցական	
Արկադի Ղուկասյան	1997 - 2008	2002 թ.-ին վերընտրվել է	անկուսակցական	
Բակո Սահակյան	2008 - 2020	2012 թ.-ին վերընտրվել է	անկուսակցական	
Արայիկ Հարությունյան	2020-ներկա	«Լեռնային Ղարաբաղի նախագահ է ընտրվել Արայիկ Հարությունյանը»	Ազատ Հայրենիք	

Ծանոթագրություններ

1. *Վանի թագավորությունը.(Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) (https://www.youtube.com/watch?v=5VR3XmHxuRI)*
2. *«ՀԱՅԱՍՏԱՆԸ 2-3-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ, Հեղինակ՝ Ս. Պողոսյան, Արմեն Ասրյան, Խ. Ստեփանյան, Է. Հովհաննիսյան» (https://web.archive.org/web/20160304104723/http://books.nt.am/readbook.php?ID=197&page=30&LangID=) : Արխիվացված է օրիգինալից (http://books.nt.am/readbook.php?ID=197&page=30&LangID=) 2016-03-04-ին: Վերցված է 2013-09-13*
3. *«Հայոց Պատմություն» 10-րդ դասարանի դասագիրք, 2009 թ.*
4. *Հայոց Պատմություն, Հեղինակ՝ Ս. Պողոսյան, Արմեն Ասրյան, Խ. Ստեփանյան, Է. Հովհաննիսյան (http://books.nt.am/readbook.php?ID=197&page=58&LangID=) (չաշխատող հղում)*
5. *Մածնաբերդի իշխանություն (https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_%28Soviet_Armenian_Encyclopedia%29_7.djvu/167)*
6. *«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» (https://web.archive.org/web/20150630102522/http://hpj.asj-oa.am/1639/1/2006-2(134).pdf) : Արխիվացված է օրիգինալից (http://hpj.asj-oa.am/1639/1/2006-2%28134%29.pdf) 2015-06-30-ին: Վերցված է 2013-09-13*
7. *«Հայոց պատմություն, հիմնահարցեր», Երևան 2000, Հ. Սիմոնյան*
8. *Զաքարյանների իշխանապետություն (http://encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1156)*
9. *«ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ» (https://web.archive.org/web/20130726141014/http://www.bvahan.com/ArmenianWay/aw/Gevorgian_Lerna_Hayastan/161-189.html#10) : Արխիվացված է օրիգինալից (http://www.bvahan.com/ArmenianWay/aw/Gevorgian_Lerna_Hayastan/161-189.html#10) 2013-07-26-ին: Վերցված է 2013-09-13*
10. *The Parliament of the Nagorno Karabakh Republic (http://www.nkrusa.org/country_profile/national_assembly.shtml)*

Գրականություն

- «Երկեր Ա» Հակոբ Մանանդյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան 1977
- «Հայկական համառոտ հանրագիտարան»,Խուդավերդյան և այլք, հատոր 1, Երևան 1990
- Ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն վիքիպեդիաների որոշ համապատասխան հոդվածներ
- ПАТРИАРХИ, ЦАРИ И ПРАВИТЕЛИ АРМЕНИИ (http://www.bvahan.com/armenianway/aw/nobility/Atabekian_Kings_List_Rus.html) Archived (https://web.archive.org/web/20110913080350/http://www.bvahan.com/ArmenianWay/AW/Nobility/Atabekian_Kings_List_Rus.html) 2011-09-13 at the Wayback Machine.
- ՀՀ նախագահի պաշտոնական կայք (https://president.am/hy/)
- ԼՂՀ նախագահի պաշտոնական կայք (http://www.president.nkr.am/am/nkr/)

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Հայկական_պետականությունների_ղեկավարների_ցանկ&oldid=8587499» էջից

ՎԻՔԻՊԵԴԻԱ
Այս էջը վերջին անգամ փոփոխվել է 18 հունվարի 2023-ի ժամը 07:29-ին: •
Բովանդակությունը թողարկված է CC BY-SA 3.0 թույլատրագրով, եթե այլ բան նշված չէ: